

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ՍՈՖԻԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆՈՐԻՆ Ս. ԾՆՈՒՔՑՈՒՆ ԿԻՐԻԼԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԻՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ԵՎ ՎԵՀԱՓԱՌԻ ՊԱՏԱՄԻԱՆԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ

ԶԵՐԴ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈ՛ՒՆ.

Առ Տերն տածած եղբայրական սիրով հաղորդում ենք Ձերդ Վեհափառությանը, որ Աստուծո ողորմությամբ փրկված մայրաքաղաք Սոֆիայում, համաձայն Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու կանոնադրության, եկեղեցական-ժողովրդական ժողովի կողմից մեր հեզությունը 1953 թվականի մայիսի 10-ին ընտրվեց Բուլղարիայի Պատրիարք և Սոֆիայի Միտրոպոլիտ, ու նույն օրն էլ կատարվեց մեր գահակալության ծեսը՝ ամբողջ բուլղարական եպիսկոպոսության, Ռուսական, Վրացական, Անտիոքյան, Ռումինական, Լեհական և Չեխոսլովակյան թանկագին ու գերապատիվ հույր եկեղեցիների սիրելի երեցփոխների, քրիստոսասեր կղերի և բարեպաշտ հավատացյալ ժողովրդի աղոթական մասնակցությամբ:

Տոնական այդ հանդեսին ու մեր ժողովրդի արտահայտած սրտահույզ և ազգու բերկրանքին իրենց համակրությունները միացրին նույնպես մյուս սիրառատ հույր եկեղեցիները:

Բուլղարական Ուղղափառ Եկեղեցին գոյություն ունի արդեն 11 հարյուրամյակ (865 թվականից) և իր բարելից կյանքի այդ երկարատև ժամանակաշրջանում Նա մեծացել, հոգևոր հասունություն է առել՝ Իր սուրբ ընդերքից երևան հանելով աստվածահաճո սրբերի և արդարների բազմերամ դաս: Դեռևս 927 թվականին, սահմանված կարգով, Նրան շնորհվեց պատրիարքական արժանիք, որը հաստատվեց 1235 թվականին եկեղեցական մեծ ժողովի կողմից Լամպսակ քաղաքում (Դարդանել նեղուցների ասիական ափին):

Բուլղարական պետությունը Թյուրքիայից ազատվելուց հետո, վերջ գտավ նաև Բուլղարական ինքնանկախ Եկեղեցու գոյությունը: Բայց նա Իր վերիրավությունը վաղուց է վերականգնել և անհրաժեշտ էր Նրա հնավանդ ու հանրահայտ պատրիարքական արժանիքը վերահաստատելու միջոցով կանոնականորեն Նրան գլխավորել, որը վաղուց էր Սրբազնագույն Սինոդը որոշել և Բուլղարական Ուղղափառ Եկեղեցին՝ նախատեսել:

Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու գլխավորումը կանոնական ու կենսական անհրաժեշտություն դարձավ այն պահից հետո, երբ այն ժամանակվա Նրա Ավագը՝ նախկին էկզարխ Նորին Երանություն Ստեփանը 1948 թվականի սեպտեմբերին հրաժարական տվեց, որն ընդունվեց Սրբազնագույն Սինոդի կողմից: 1953 թվականի մայիսի 10-ի եկեղեցական-ժողովրդական ժողովի քվեով դժվարին ու պատասխանատու վիճակ ընկավ մեր հեզությանը, որ Աստուծո օգնությամբ ծառայել է որպես եպիսկոպոս 17 տարի, դրանից 15 տարի՝ որպես Պլովդիվի Միտրոպոլիտ և երկուս և կես տարի՝ որպես Սրբազնագույն Սինոդի Նախագահի Տեղապահ:

Եղբայրական սույն համակով մենք Ձեզ Վեհափառությանը միջեկեղեցական հարաբերություններում ընդունված սովորության համաձայն հաղորդում ենք մեր ընտրված լինելու և գահակալության ծեսը կատարված լինելու մասին: Միաժամանակ հաղորդում ենք Ձեզ, որ մենք, ինչպես և առաջներում, լիովին համամիտ լինելով Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու Սրբազնագույն Սինոդի հետ, այսուհետև ևս նախանձախնդիր ենք լինելու փրկչական անխախտ հավատին, աշխատելու ենք այդ հավատը պահպանել մաքուր և զորեղ, Տիրոջ փրկչական խոսքն ավետելու ենք ճշմարտորեն և ջանալու ենք Աստուծո Սուրբ Եկեղեցին զորացնել Հիսուս Քրիստոսի և սուրբ առաքելոց հիմունքով կառուցված ճշմարտության ոգով՝ նախանձախնդիր կերպով պահպանելով Տիեզերական Ս. Եկեղեցու կանոնական սահմանները ու բարեպաշտ ավանդությունները: Առ Աստված ունեցած մեր սիրով, մենք ամեն կերպ նպաստելու ենք տեղական սուրբ եկեղեցիների միջև եղած կապերը զորացնելուն, բոլոր ուժերով աշխատելու ենք, նույնպես, ինչպես աղոթում ենք, հանուն ժողովուրդների միջև խաղաղության, բարյացակամության ու եղբայրության:

Մենք խնդրում ենք Ձեզ սուրբ հովվապետական աղոթքները, որ մեր մեծ Հայրապետն օրհնե մեր ծառայությունը, որը բարեհաճ է լինելու Նրան, օգտակար՝ Նրա Սուրբ Եկեղեցու համար և փրկարար՝ մեր հեզության ու հավատացյալ ժողովրդի համար:

Մնամք Ձեզ Ամենապատիվ Վեհափառությանն մեր առ Տերն տածած սիրով՝

ԿԻՐԻԼ
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ

1953 թվականի մայիսի 23-ին

Սոֆիա, Բուլղարական Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Սինոդ

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿՅՈՒՐԵՂ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՆ

ՍՈՖԻԱ, ԲՈՒԼՂԱՐԻԱ

ՁԵՐԴ ԳԵՐԱՁԱՆՅՈՒԹՅՈՒՆ.

Քրիստոնեական սիրով տոգորված՝ հանդես Բուլղարական Ուղղափառ եկեղեցու՝ առանձին հրճվանքով կարդացինք Սրբությանդ հաղորդագրությունը և իրազեկ եղանք, որ տարվույս մայիսի 10-ին, աստվածապարգև Սոֆիա մայրաքաղաքում, համաձայն Բուլղարական Ուղղափառ եկեղեցու կանոնադրության, եկեղեցական-ժողովրդական ժողովի կողմից ընտրված եք Բուլղարական եկեղեցու Պատրիարք և Սոֆիայի Միտրոպոլիտ՝ և նույն օրը ձեռնադրված, ի ներկայության բուլղարական եպիսկոպոսական լրիվ դասի, Ուղղափառ եկեղեցու բոլոր քույր եկեղեցիների ներկայացուցիչների ու համայն բուլղար ժողովրդի:

Մայիսի 10-ը Բուլղարական եկեղեցու և բուլղար ժողովրդի համար նշանակալից և տոնական օր է և՝ մեզ համար՝ ողջունելի, որովհետև հոգևորականությունն ու ժողովուրդը տոնում են Բուլղար եկեղեցու Պատրիարքության վերահաստատության խնդալից տոնը, որ Բուլղարական եկեղեցու զորացման ու զարգացման նախանշանակն է:

Նշանակալից է նաև Սրբությանդ պատրիարքական ձեռնադրության առթիվ տված հրապարակային ուխտը՝ Հիսուս Քրիստոսի և սրբոց առաքելոց վարդապետած հավատո և բարոյական նշմարտությանց մշտապես աշակերտ մնալու, Քրիստոնեական Տիեզերական եկեղեցու ավանդներին և Բուլղարական եկեղեցուն հավատարիմ մնալու:

Այս նշանակալից և մեծահանդես տոնի առթիվ Բուլղարական եկեղեցու և բուլղար հավատացյալ ժողովրդի զմայլանքին և ուրախությանը միացնում ենք նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի ու Մեր խնդակցությունը՝ և շնորհավորում ենք Բուլղարական եկեղեցու Պատրիարքության վերահաստատությունը և Սրբությանդ պատրիարքական ընտրությունը՝ մաղթելով Ամենաբարձրյալին՝ շնորհել Ձեզ արևշատություն, Բուլղարական եկեղեցուն՝ բարգավաճումն, Բուլղար պետության՝ անսասանություն և բուլղար ժողովրդին՝ բարօր և երջանիկ կյանք:

ԳԵՈՐԳ Զ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ